



ՀԱՅՐԱԿԱՆ ԽՕՍՔ
ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՐԱՒԱՅԻՆ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴԱՅ,
ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՅ ԳԱՍՈՒՆ, ԱԶԳԱՅԻՆ-
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՅ ԵՒ
ՀԱԻԱՏԱՅԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ

Աստուծոյ կամքով և ողորմութեամբ աւարտեցինք Մեր Հոփուապետական անդրանիկ այցելութիւնը Հարաւային Ամերիկայի մեր երեք թեմերուն՝ ի Սան-Փաւլօ (Պրայիլ), ի Մոնթէվիդէօ (Սրուգուայ) և ի Պուէնոս Այրէս և Գորտոպա (Արժանթին): Հոգեկան խոր գոհունակութեամբ վերադարձանք ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուր Մեր ժամանման իսկ առաւօտը, Կիրակի 18 Օգոստոսին, Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին, յնթաւ Ս. Պատարագին, յատուկ աղօթք մատուցինք առ Բարձրեալն և Ամենախնամ Աստուած ձեր բոլորին համար փառք տալով իրեն ձեր քրիստոնէական հաւատքի վառ կենդանութեան, ձեր ապգային համայնքային, կրթական և մշակութային առողջ և եռուն կեանքին, ձեր տոկուն հաւատարմութեան հանդէպ Հայց. Առաքելական Ա. Եկեղեցւոյ և անոր Մայր Աթոռին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան որ ի Ս. Էջմիածին և ձեր հայրենանուէր ոգիին համար, հանդէպ մեր վերանկախացեալ Մայր Հայրենիքին և անոր Ազատ ու Անկախ Հանրապետութեան:

Միածնաէջ սուրբ խորանին առջև հայցեցինք Միածին Որդիէն որ Ս. Հոգւոյ շնորհները առատօրէն հեղու ձեր վրայ, որպէսլի մնաք, տնէք և յառաջանաք ձեր քրիստոնէական սուրբ հաւատքի, իր Ս. Եկեղեցւոյ կեանքին ներգործութեան զօրացումովը ձեր անհատական ընտանեկան և ընկերային համայնական կեանքերուն մէջ, որպէսլի կարենաք աւելի պերճախօս գործերով դաստիարակել և կազմաւորել ձեր նոր սերունդի զաւակները և

առաել ևս պատիւ շահիլ ձեր ապրած երկիրներու պետական իշխանութեանց և ժողովուրդներուն մօտ, որպէս տիպար քաղաքացիներ և Հայ ազգի արժանաւոր պաւակներ:

«Ով Տէր Աստուած հարցն մերոց, Արարիչ երկնի և երկրի, Աղբիւր ամենայն բարութեանց, օրինէ՝ Հարաւային Ամերիկայի մէջ ապրող Քու հայապարմ պաւակները, խաղաղութիւն և բարգաւաճութիւն պարգևէ Պրապիլի, Ուրուկուայի և Արժանթինի համայն ժողովուրդին, սէր և միութիւն, համերաշխութիւն և գործակցութիւն սերմանէ մեր Հայց. Եկեղեցւոյ թեմերու համայնքային կեանքին մէջ: Զօրացո՛ւր կամքերը, պայծառացո՛ւր միտքերը., ազնուացո՛ւր սիրտերը մեր սիրեցեալ ժողովուրդի բոլոր պաւակներուն: Բժշկէ՛ բոլոր տեսակի հիւանդութիւնները, առողջութիւն, գործոց առատ պտղաբերութիւն շնորհէ բոլորին և անսպառ ու անստուեր երջանկութեան բարիքները առատօրէն ցանէ անոնց կեանքերուն մէջ, որպէսզի մնան և աճին որպէս հաւատաւոր պաւակները և զինուորագրեալները Ս. Գրիգոր Լուսաւորչի կենդանարար հաւատքին, Ս. Մեսրոպ Մաշտոցի Գիր-Կտակին, Ս. Վարդանեան և Սարտարապատեան ու Արցախեան ազգային ոգիին, Ազատութեան և Անկախութեան գաղափարականին մեր նոր Հանրապետութեամբ վերստին մարմին զգեցած, և որպէս նուիրեալ և երկրաշէն քաղաքացիները իրենց օրինեալ երկիրներուն ի Հարաւային Ամերիկա:

Եւ Բեզ փառք յաիտեանս. ամէն»:

Սիրելի՛ք,

Լրիւ երկու շաբաթներ (31 Յուլիսէն 15 Օգոստոս) գտնուեցանք ձեր մէջ, ձեր հոգևոր թեմակալ Սաքնորդներուն՝ Տ. Տաթև Արքեպիսկոպոս Ղարիպեանի, Տ. Յակոբ Եպիսկոպոս Գըլընճեանի, Տ. Գիսակ Եպիսկոպոս Մուրատեանի և ձեր թեմական վարչական մարմիններուն հետ միասին: Աղօթեցինք միասին, Ս. Պատարագ մատուցինք, Ս. հաղորդութիւն ստացանք, Ս. Աւետարանի խօսքը քարոզեցինք, Հայրապետական պատգամներ տուինք եկեղեցիներու թեմերէն, կեդրոններու, հանդիսասարահներու ամպիոններէն, Հայրական սիրոյ խօսքեր ուղղեցինք ձեր նոր սերունդի պաւակներուն՝ դպրոցական աշակերտներուն, ձեր կրթական յարկերուն տակ, միջ-եկեղեցական աղօթք մատուցինք քոյր եկեղեցիներու ներկայացուցիչներուն հետ, դասախօսութիւն տուինք հայ և օտար շրջանակներու մէջ, այցելեցինք ձեր պետութեանց Նախագահներուն, կառավարական, քաղաքային և դատական իշխանութիւններուն: Մէկ խօսքով՝ հաղորդութեան և հաղորդակցութեան լիացած և յագեցած օրեր եղան Մեր Հովուապետական այցելութեան օրերը:

Մինչև Մեր այցելությունը, անուամբ, թիւերով և վիճակագրություններով հապիւ գաղափար մը ունէինք ձեր կեանքի մասին: Լսէր էինք, կարդացեր էինք. Բայց ուրիշ բան է լսելը և ուրիշ՝ տեսնելը, ուրիշ բան է գիտնալ, և ուրիշ՝ ճանչնալը: Աշխարհագրականօրէն այնքան հեռու, ովկիանոսներով շրջապատուած այդ ցամաքամասը որպէս հող ու երկիր, լեզու, վարք ու բարք, կենցաղ ու մշակոյթ տարբեր է մեր հայրենի աշխարհէն և հայրենական կեանքի ասանդություններէն ու սովորություններէն: Դուք գիտցաք աշխարհագրական հեռաւորութիւնը և մշակութային օտարութիւնը նուաճել: Գիտցաք գաղթականի, արքսոքայի, հայրենապուրկի հոգեբանությունը փոխել, Ձեր նոր երկիրներու լեզուն, վարքն ու բարքը իրացնել և միանգամայն կենդանի պահել ձեր հայրերու նուիրական ասանդությունները, կրօնական, լեզուական, կենցաղային ու մշակութային մարպերու մէջ: Դադրեցաք գաղթական ըլլալէ և զգեցաք կերպարը քաղաքացիի, լիիրաւ, լիարժէք և նոյնիսկ պատուաբեր հպատակներ ձեզ ասպնջականօրէն հիւրընկալող երկիրներուն և անոնց պետություններուն: Դարերով կոանուած պարկեշտ, չարքաշ աշխատասիրութեան և ձեռներէցութեան Ձեր հայ ազգի յատուկ առաքինությունը դուք գիտցաք լիովին վերարժնորել, վերակենդանացնել ի խնդիր ձեր կեանքի բարելաման և զայն ի սպաս դնել ձեր երկիրներու զարգացման: Ձեր ճակտի քրտինքով, ձեր "հալալ" վաստակով՝ "կրպակ"ի, "խրճիթ"ի, "խանութ"ի գործելակերպերէն, պարզ աշխատաւորի ու արհեստաւորի վիճակներէն դուրս եկաք և հասաք մինչև ճոխ ու փարթամ տուներու, բնակարաններու և վաճառականի, հողատէրի, գործարանի, ճարտարարուեստական և ճարտարաշինական ընկերություններու հիմնադիրներու և կապմակերպողներու սերունդի:

Ձեր լիառատ և անվերապահ մասնակցությունը սկսաք բերել ձեր երկիրներու, պետական, կառավարական, տնտեսական, ընկերային և մշակութային կեանքի և յառաջադիմութեան:

Շղանք ձեր երկիրներու պետութեանց նախագահներուն՝ Ֆերնանտօ Հենրիկէ Քարտուսի, Խուան Մարիա, Սանկինետիի, Քարլոս Մենեմի, և պետական, կառավարական, քաղաքային իշխանութեանց ներկայացուցիչներու հետ: Ինչ որ լսեցինք բոլորէն, անխտիր, հոգեկան խոր հրճուանք և բերկրանք պատճառեց Մեզի, որովհետև անոնց վկայություններուն մէջէն իրապէս դարձանք ձեր կեանքի և աշխատանքի, պարկեշտութեան և հաւատարմութեան այն առաքինություններուն մասին, որոնք քրիստոնէական հաւատքով թրծուած մեր հայ ժողովուրդի

հարապատ ոգիին՝ կերպարին ջինջ ու վճիտ արտայայտությունն են, մեր ազգի դարաշունչ կեանքի ամենէն վաւերական և բնատուր ինքնութեան և արժանապատուութեան պատկերը:

Ապրի՛ք, հապա՛ր ապրի՛ք, քանի այսպէս պատուով ապրեցնել գիտէք ձեր հայութիւնը:

Եղանք ձեր եկեղեցիներուն մէջ, թէ՛ կեդրոնական քաղաքներուն և թէ՛ քաղաքածայրի արուարձաններուն մէջ: Վկայ դարձանք ձեր հաւատքի կենսունակութեան: Մեր եկեղեցին մեր ժողովուրդի հոգեկան առողջութեան և զօրութեան աղբիւրն է: Այնտեղ Աստուծոյ ներկայութեան և մեր կեանքերուն մէջ ներգործութեան զգացումը մեզ հոգեպէս կը մաքրէ և կ'ուժեղացնէ: Հարկ է, որ աւելի գործօն դառնան ծխական եկեղեցիները Աւետարանի ազդեցիկ քարոզութեամբ, եկեղեցական ծէսերու վայելույշ կատարմամբ և ժողովուրդի մասնակցութեամբ: Ոյժ պէտք է տալ նոր սերունդի և երեխաներու մասնակցութեան և կրօնական առողջ դաստիարակութեան կազմակերպութեան, ըլլա՛յ դպրոցական կրթութեան, ըլլա՛յ մասնաւոր դասընթացքներու միջոցաւ, ինչպէս Կիրակնօրեայ Վարժարաններու հաստատումով կամ երեկոյեան դասախօսական շարքերով:

Կրօնական-եկեղեցական բնագաւառին մէջ յատուկ ուրախութիւն պատճառեց Մեկի քրիստոնէական այլ եկեղեցիներու հետ ձեր մշակած բարւոք յարաբերութիւնները: Միջ-եկեղեցական (էկումենական) կեանքը այլևս դարձած է 20-րդ դարու ամենէն տարածուն երեւներէն մէկը քրիստոնէական եկեղեցւոյ կեանքին: Մենք՝ որպէս Հայ եկեղեցի՝ կոչուած ենք գործօն մասնակցութիւն բերելու էկումենական այս օրհնաբեր շարժումին: Որքա՞ն խոր հոգեկան վայելք զգացինք Պուէնոս Այրէսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցւոյ մէջ Կարդինալ Անթօնիոյ Կուարրաչինոյի հետ միասին և մասնակցութեամբ կաթոլիկ, օրթոդոքս և բողոքական եկեղեցիներու ներկայացուցիչներուն ունենալով միասնական աղօթքի պահը 8 Օգոստոսին: Շարունակեցէք կենդանի պահել մեր Սուրբ եկեղեցւոյ դերը Հարաւային Ամերիկայի տարածքին միջ-եկեղեցական յարաբերութիւններու մարզին մէջ:

Եղանք Ձեր դպրոցներուն մէջ: Որքա՞ն յուսադրիչ և խանդավառիչ երևոյթ էր տեսնել հայ մանուկներու, պատանիներու և երիտասարդներու առոյգ և կայտառ պատկերը, որ կարծես ժպիտն էր ձեր համագաղութային դէմքին և միանգամայն սլացքը նայուածքին՝ ուղղուած մեր ապագային... :

Դեռ մեր ականքներուն մէջ ջինջ կը հնչեն զիլ ձայները ձեր երեխաներուն, դեռ մեր աչքերուն մէջ չէ նուաղած ճառագայթուն

փայլը ձեր պատկներու և թոռներու նայուածքներուն: Դեռ չէ դժգունած մեր յիշողութեան պաստառին վրայ ժպիտը անոնց դէմքերուն, որոնց մէջէն նոր իմն ուժգնութեամբ, թարմութեամբ և յուզական ըլլալու չափ անմեղութեամբ կը դիմագծուի պատկերը մեր ազգի կենսոտոութեան:

Բնականօրէն պգացինք որ հայերէն լեզուի գործածութիւնը որոշ բան կորսնցուցած է իր սահունութենէն և յաճախականութենէն: Բայց մեծապէս գնահատելի կը նկատենք այն ինչ որ յաջողած էք ընել և ունիք կարելիութիւնը և պարտաւորութիւնը ատելին ընելու: Այսօրուան ձեր տնտեսական պայմանները ատելին են քան ինչ որ էին ձեր հայրերու օրով: Կը մնայ ոյժ տալ ուսուցչական կազմերու առաւել ևս վարձացման և կրթական ու մշակութային գործունէութեանց վարձացման:

Եղանք Ձեր հաւաքական, միութենական, կազմակերպական, համայնքային կեանքի ալլապան կենդրոններուն և սրահներուն մէջ, երբեմն ընտանեկան յարկերուն տակ, մանաւանդ Հայ Կեդրոնի սրահներուն և նոյնիսկ շրջափակին մէջ, մատաղի սեղաններուն շուրջ համախմբուած հազարաւոր հաւատացեալ և հաւատարիմ հայորդիներուն հետ: Մնիստրաբար և հայրական ջերմ սիրով այցելեցինք այլապէս Միութիւններու և Կազմակերպութիւններու կեդրոնատեղիները և գնահատեցինք անոնց ազգաշինական գործունէութիւնները: Տեսանք երէց սերունդի մեր հայրերն ու մայրերը ծերանոցներուն մէջ և յարգանք ու պատիւ ընծայեցինք անոնց՝ իրենց տքնաքան աշխատանքին, անչափելի սիրոյն և զոհաբերական հոգածութեան համար իրենց պատկներուն և թոռներուն հանդէպ: Մէկ խօսքով՝ եղանք մեծին ու փոքրին, չափահասին ու երիտասարդին, ունևորին և նուազ ունևորին հետ: Մեր այցելութեան կարճ ժամանակամիջոցին ջանացինք շաղուիլ մեր ժողովուրդի ամբողջ զանգուածին հետ, լսեցինք շատերը, պգացինք բոլորին սրտի տրուիլ մեր երակներուն մէջ, իրապէս դարձանք դրական և երբեմն ոչ դրական երևոյթներու մասին, տեսանք տաքն ու պաղը: Եւ այս բոլորին մէջ ապրեցանք յոյսի և յոյսի պահեր, գօտեպնդուեցանք ձեր կեանքի աշխուժութեամբը, լեցուեցանք լաւատեսութեան ապրումներով:

Մեր կարգին ջանացինք ձեզի փոխանցել քրիստոնէական և հայկական այն նոր շունչը որ ահա կեանք է առեր այս անցնող տասնամեակին մեր Մայր Հայրենիքին՝ Հայաստան աշխարհին և Մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ ապաստութեան պայմաններու վերատեղծումովը և այժմ արդէն իսկ հնգամեայ անկախ Հանրապետութեան հովանիին ներքև:

Դուք զգացիք այդ հիմնական, անկիւնադարձային, պատմականերտ շրջափոխութեան հրամայական մարտահրաւերը (challenge), որ ուղղուած է ամէն մէկ հայու, ուր ալ ըլլայ ան, որ երկրի մէջ ալ որ ապրի ան Հայաստանի Հանրապետութեան սահմաններէն մինչև Արցախ, և մինչև աշխարհի չորս ծագերը, ի՞նչ դաւանանքի, գաղափարի, քաղաքական ուղղուածութեան կամ դասակարգի ալ որ պատկանի ան:

Դուք եղաք առաջին գաղութներէն մէկը, որ գիտցաք գործնապէս զօրավիզ կանգնիլ մեր մայր աշխարհի Հանրապետութեան, անոր ժողովուրդին, պետական, կրթական, գիտական, մշակութային, ընկերային, բարեսիրական կառոյցներուն, թէ՛ «ՀԱՅԱՍՏԱՆ» Համահայկական Հիմնադրամի և թէ՛ այլ ուղղակի կամ անուղղակի միջոցներով:

Զօրավիզ կը կանգնիք նաև ձեր հոգևոր մօր՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, որուն սէրը այնքան կենդանի և վառ գտանք ձեր բոլորին մէջ անխտիր: Եօթնասուն տարիներու հակակրօնական և բռնատիրական խորհրդային վարչակարգի ճնշումներէն և սահմանափակումներէն ձերբազատուած Սնկախ Հայաստանի ապատութեան նոր պայմաններուն ներքև այժմ ապրող ու գործող Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը նոր առաքելութեան է կոչուած, նոր հոգևորականներու պատրաստութեան գործին ուժգնօրէն լծուած քրիստոնէական հաւատքի քարոզութեան նուիրուած, եկեղեցաշինական և վերանորոգչական գործունէութեան ընթացքի մէջ մտած:

Բոլորդ ալ քաջատեղեակ էք, որ կը պատրաստուինք այս դարաւոր եկեղեցւոյ պաշտօնական հիմնադրութեան կամ Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակը տօնել: Կարելի չէ մեր ժողովուրդին և մանաւանդ աճող նոր սերունդին և ողջ աշխարհին ներկայանալ այնպէս ինչպէս որ էինք երէկ: Հոգևոր վերաթնութեան ենք հրաւիրուած, իսկական քրիստոնէական մեր պատկերը մաքրապարզելու և պայծառացնելու պարտականութեան առջև կը գտնուինք: Չենք կրնար մեր հայրերու սուրբ և փարթամ ժառանգը թողուլ այն վիճակին մէջ ուր կը գտնուի ան ներկայիս: Մններելի պիտի ըլլայ մեզի ներկայանալ աշխարհին Մայր Հայաստանի, Արցախի և կամ այլ ուրեք գտնուող և դեռևս աւերակեալ, վնասեալ, անջքացեալ եկեղեցիներով: Փառակերտ ճարտարապետութեամբ կառուցուած և մշակութային հոգևոր գործունէութեամբ հռչակեալ մեր եկեղեցիները և վանքերը թողուլ այսօրուան յուշարձանային պահպանութեան նսեմ պայմաններուն տակ՝ քրիստոնէական և ազգային դաւաճանութեան համազօր վերաբերում է: Պէ՛տք է անհրաժեշտօրէն ստիպողական և այժմէական հրամայականութեամբ, առաջնա-

հերթային կարևորությամբ լծուիլ վերանորոգման աշխատանքներուն, նո՛ր եկեղեցիներու կառուցումին, անոնց որպէս պսակում նկատի ունենալով քաղաքամայր Երևանի մէջ նոր Մայր Տաճարին՝ մեր Հաւատով Հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի անուամբ կնքուելիք քաթէտրալին կառուցումը, որպէս պերճախօս և անհերքելի ապացոյց մեր քրիստոնէական հաւատքի անխորտակելիութեան, նորացման և վերակենդանացման և որպէս արժանապայել արտայայտութիւն մեր ապգային արժանապատուութեան:

Մեր Հովուապետական այցելութեան ընթացքին Մենք խորապէս և երջանկօրէն յուզուեցանք և մեծապէս քաջալերուեցանք երբ տեսանք որ Հարաւային Ամերիկայի տարածքին ապրող մեր ժողովուրդի պաւակներուն մէջ գտնուեցան ապգայիններ, որոնք սրտաբուխ ու յօծարակամ կերպով ստանձնեցին որոշ հին եկեղեցիներու նորոգութեան բարերարութիւնները և կատարեցին ու պիտի շարունակեն կատարել այդ ուղղութեամբ նկատառելի նուիրատուութիւններ անհատապէս կամ խմբային ձևերով:



Հաւատացեալ և հաւատաւոր հայորդիք,

Նոր դարաշրջանի մը մէջ ենք թևակոխած դարագնաց մեր պատմութեան յարաշարժ ընթացքին մէջ: Դիտեցէք ձեր շուրջը: Ձեր երկիրները՝ Պրապիլ, Ուրուկուայ, Արժանթին չեն այն ինչ որ էին տարիներ առաջ: Աշխարհն ամբողջ կ'անցնի արմատական յեղաշրջութեան մէջէն: Համայնապարական խորհրդային իշխանութեան համակարգը խորտակուեցաւ: Երկաթէ վարագոյրը հալեցաւ: Պերլինի պատը խորտակուեցաւ: Գիտութիւնը հսկայական, գլխապտոյտ տուող յառաջդիմութիւններ արժանագրեց: Տնտեսական, ճարտարարուեստական, ճարտարաշինական կառոյցները հիմնապէս փոխուեցան, և կը շարունակեն արագօրէն փոխուիլ: Կենցաղային պայմանները, բարոյական չափանիշները, հոգևոր արժէքները ահաւոր ցնցումներ կրեցին: Այս բոլորին մէջ մենք չենք կրնար մնալ անփոփոխ և անփոփոխելի, մասաւանդ այն էապէս շրջադարձային նշանակութիւն ունեցող դէպքին համար, որ մեր համայն հայութեան երապին իրականացումն էր, մեր ապգի դէմ գործուած ցեղասպանութեան ճախողանքի մատնուիլը, մեր վրայ պարտադրուած բռնապետական իշխանութեան վերացումը և մեր Մայր Հայրենիքի անկախութեան վերահռչակումը:

Երբ աշխարհն ու անոր մէջ մեր Մայր Հայրենիքը այսպիսի տարերային փոփոխութեան են ենթարկուած, ինչպէ՞ս մենք կրնանք մնալ այն ինչ որ էինք այս փոփոխութիւններէն առաջ:

Եթէ մնանք անփութիւն՝ կը նշանակէ որ պատմութեան յառաջ-
խաղացքին հետ քայլ չենք պահեր և օր մը կը մնանք կեանքի
քայլարշաւէն դուրս, մալթին վրայ, կ'անցնինք էջի լուսանցքին
կամ կ'իջնենք ստորէջեան բաժինին...:

Նոր հայր պէտք է ծնի մեր մէջ, ինչպէս նորացեալ ծառը
պարտէվին մէջ...:

Այդ նոր հայր, Մեր հայեցողութեամբ, պէտք է էապէս ունենայ և
մշակէ իր մէջ պետական ազգի գաղափարը: Ժողովուրդը ըլլալու
հոգեբանութենէն պէտք է անցնինք պետական ազգ դարձած
ըլլալու հոգեբանութեան և մտածողութեան ու ըստ այնմ ճշտենք
վարուելակերպի մեր ուղղութիւնը:

Այդ նոր հայու կերպարին ուրիշ մէկ գիծը պիտի ըլլայ
միութեան և ամբողջականութեան ինքնըմբռնումը: Մասնա-
հատուած ազգի բեկորներու վիճակէն պէտք է անցնինք մէկ ազգ,
մէկ Եկեղեցի, մէկ հայրենիք, մէկ պետութիւն ըլլալու բաղարջային
գիտակցութեան և այդ գիտակցութիւնը գործնապէս արտայայ-
տելու պարտաւորութեան: Տարբերութիւններ պիտի մնան և դեռ
յամենան: Նոր տարբերութիւններ պիտի յառաջ գան: Այդ բոլորը
մարդկային կեանքի, մանաւանդ ազատ ու անկախ կեանքի բնա-
կան արտայայտութիւններն են: Բայց այդ բոլորը իրենց անդրա-
գոյն իմաստը կը գտնեն երբ կամարակապուին միութեան շաղա-
խով, ամբողջականութեան և ընդհանրական շահի գիտակցու-
թեան շօշափելի առկայացումով: Ճշմարիտ ազգի ամենէն ճշգրիտ
սահմանումն է այս, բոլոր ազգերու կեանքին մէջ անհերքելիօրէն
ճշմարտուած իրականութիւնը, թէ՛ պատմական հայեցողութեամբ
և թէ՛ այժմեան կեանքի տուեալներու փաստովը: Այդ միութեան
ստեղծման մէջ մագնիսական ոյժ ունեցող կեդրոնական կորիզը
մեր հայրենիքն է իր անկախ Հանրապետութեամբ, որուն ամրա-
ցումը, ապահովութիւնը և օրէ օր արմատացումն ու զարգացումը
մեր բոլորի և իւրաքանչիւրի շահն է, մեր աչքի բիբին մէջ լզայուն
կէտը, մեր համայնական մարմնի մէջ սրտին պէս կենսատու
օրկանը:

Այդ նոր հայու կերպարին բաղկացուցիչ տարրերէն մէկն է
պարտականութեան մարդու հոգեբանութեան ու վերաբերումի
եղանակը: Ընդունինք որ իրաւունքի մասին շատ կը խօսինք, բայց
սակաւախօս ու մանաւանդ սակաւագործ ենք պարտականութեան
մարկին մէջ: Դ՞նչ կրնամ ընել ես, ի՞նչ պէտք է ընեմ ես իմ ազգիս,
Եկեղեցիիս, մշակոյթիս, դպրոցիս, հայրենիքիս, հայրենի պետութեանս և
հերոսակեաց Արցախիս համար: Ահա՛ հասարակաց հարցումը, որ
հրամայական շեշտուածութեամբ դրուած է բոլորիս, և իւրա-
քանչիւրիս համար: Այս հարցումին ժամն է այս օրը, մեր ազգի
ներկայ դրուածքը: Դ՞նչ կրնայ և պէտք է ընէ ազգս, Եկեղեցիս,

հայրենիքս ինձի համար՝ հարցումը իր վաւերականութիւնը և ճշմարտականութիւնը, արժէքն ու կարևորութիւնը կը գտնէ այն ատեն երբ մենք դրականօրէն պատասխանած կ'ըլլանք առաջին հարցումին և երբ ազգն ու հայրենիքը, Եկեղեցին և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը այնպէս ուժեղ կ'ըլլան, որոնցմէ մեր սպասումներն ու պահանջները կը դառնան բնական և տրամաբանական:

Կ'ապրինք ժամանակներու մէջ, արդիապաշտ կոչուած ժամանակաշրջանի մը մէջ, ուր աշխարհայնապաշտութիւնը ծայրայեղ տարածքներու է հասած (extreme secularism): Սպառողական ընկերութեան մը փորձութեան մէջէն կ'անցնինք: Սպառողապաշտ, մակերեսայնապաշտ, հաճոյապաշտ, նիւթապաշտ, հեշտակեաց ապրելակերպերու յաճախանքը սպառնական և ջլատիչ տարողութիւն է զգեցած շատերու կեանքերուն մէջ: Ընդհանուր աշխարհի կեանքի յատուկ երևոյթ է այդ, պիտի ըսէք: Եւ՝ իրաւունք ունիք:

Բայց այդ բոլորին մէջ մե՛ր աշխարհը ունի անմիջական աւելի կենսական կարիքներ և պահանջներ: Մենք ազգապահպանումի հանգրուանէն կ'անցնինք ազգակերտումի հանգրուանին: Հայապահպանումը այսօր ունի նո՛ր անուն-հայակերտութիւն, որուն սիրտն է հայրենակերտութիւնը: Մեր հայ ազգի օրակարգի վրայ ուրիշ առաջնահերթութիւններ կան քան ընդհանուր աշխարհի օրակարգի հարցերը: Մենք քալլ պահելով հանդերձ աշխարհի գնացքին հետ պէտք է գտնենք մեր սեփական ուղին համաշխարհային կեանքի լայն ու բազմուղի պողոտային վրայ:

Մենք կոչուած ենք այսօր հիմնական զեղչումներ կատարելու այն բոլորէն որոնք սպառողական ընկերութեան սնապաշտութեան և աւելորդապաշտութեան հետ են առնչուած: Սին, փուճ, ժամանակաւոր և ժամանցային "արժէք"ներու կուռքերուն խունկ ծխելու փոխարէն, խունկ ծխենք իսկական, յաւերժական, առողջապարզ և արժէքներուն, որոնց մէջ է մեր յաղթանակի գաղտնի ոյժը:

Ձեր կեանքին մէջ զգացէք և զգացուցէք Աստուծո՛յ, աստուածայինի՛ գերազանց ու անփոխարինելի տեղն ու ազդեցութիւնը: Մեր Եկեղեցին և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, Հայց-Եկեղեցւոյ միւս նուիրապետական Աթոռներուն հետ միասին, պէտքն ունի վերակենդանացման: Չօրացուցիչ, հարստացուցիչ և երջանկացուցիչ կերպն է այդ մարդկային կեանքին մէջ: Նայեցէք մեր պատմութեան, մեր հայրերու ժառանգութեան, որուն շարունակողները ըլլալու ենք կոչուած որպէս այսօրուան սերունդը որ իր նայուածքը յառած է վաղուան աւելի պայծառանալիք հեռանկարին: Մեր պատմութեան պերճախօս վկայութիւնները՝ մեր

ինքնութեան և ինքնատևողութեան և ինքնապարգաւցման տարրերը մեր հոգեմտաւոր ու մշակութային ստեղծագործութիւններն են, որոնցմով մենք զմեզ կը ճանչնանք, որոնցմով արդարօրէն կը հպարտանանք և որոնցմով կը ներկայացնենք մենք զմեզ ողջ աշխարհին ու համայն մարդկութեան:

Մեր բնօրրան Հայաստանն ու բազմադարեայ հայութիւնը, սակայն, անցեալի հարց չեն: Անցեալով հարուստ են, բայց անցեալ չեն: Այսօր նոր Հայաստան ենք, նորոգեալ ժողովուրդ ենք, նոր պարտաւորութիւններու շալակը մեր ուսին՝ դէպի ապագայ ընթացող: Գիտնանք զո՞հ չերթալ այնպիսի կենցաղակերպերու, որոնց մէջ կրնանք սպառելով սպառողի...: Գիտնանք ընտրել աշխարհէն այն դրական և մնայուն արժէք ներկայացնող երևոյթները, որոնք քաղաքակրթիչ և ազգակերտական ոյժ ունին և վանենք այն ժխտական ապրեցութիւնները, որոնք մեր մէջ կը սպանեն մարդկային և ազգային արժէքները:

Ահա թէ ինչո՞ւ Մեր Հայրապետական խօսքը և անով արտայայտած Մեր խոհերը կ'ուզենք եպրակացնել կոչով մը.

Մենք կոչուած ենք կեանքը ապրելու ոչ սոսկ և պարզապէս ապրելու համար, այլ կոչուած ենք զայն մտածելով ապրելու: Հարկ է որ գործածենք Աստուծոյ տուած մեծ շնորհներէն մէկը - մեր միտքը, տրամաբանելու, կշռադատելու, ընտրելու կարողութիւնը: Ինչպէս երբեմն Մեր արտասանած հրապարակային խօսքերուն մէջ ըսինք, չմտածուած կեանք մը մարդկային կեանք կոչուելու իրաւունք չունի: Այլ առիթով յիշեցուցինք ձեզ լատինական առածը, որ կ'ըսէ "կեանքը սոսկ ապրիլ մը չէ, այլ (զայն) արժևորել է" (vita non est vivere, sed valore):

Գիտնանք մեր անձնական, սեփական կեանքը արժևորել մանաւանդ մեր պատմութեան այս վճռական հանգրուանին, այնպիսի ապրումներով, այնպիսի արարքներով և այնպիսի գործերով որոնք իմաստ կուտան մեր գոյութեան և ինքնագոհութեան, ինքնիրագործումի զգացումներով երջանկութիւն կը պատճառեն: Եւ՝ ոչ միայն մեզի, այլ նաև ուրիշին, մեր նմանին, մեր հարապատին, մեր բարեկամին, կարիքաւորին, ինչպէս նաև ու մանաւանդ մեզմէ վեր եղող բայց մեր մէջէն անբացակայ և անբաժան մեր Մեծ Ես-ին, մեր հաւաքական գոյութեան և լինելութեան՝ մեր ազգին և Եկեղեցիին, մեր հայրենիքին և մեր մշակոյթին, մեր պետութեան և ժողովուրդին:

Յատուկ կարևորութեամբ կը շեշտենք այս պարագան որովհետև այս ներկայ ժամանակները որոշադրիչ, վճռադրոշմ դեր ունին մեր ամբողջ ապագային համար: Այս օրերուն, ընդհանրական շահը այնքան անմիջական և սուր հանգամանք տալցած է որ մեր նոր դարաշրջանի կերտումին գրաւականն է:

Ձեր եկեղեցիները, մեր դպրոցները, մեր երիտասարդներուն հայեցի առողջ դաստիարակութեան փրկաւէտ գործը, մեզ կը դնեն նո՛ր անելիքներու առջև: Հարկ է ունենալ կարող, դարու պահանջքին համաձայն պատրաստուած եկեղեցականներ, ուսուցիչներ, մտաւորականներ, համայնքային սպասաւորներ, որպէս-յի շէն ու արդիւնագործ դառնան մեր համայնքային կրօնական և ազգային, կրթական, մշակութային հաստատութիւնները և նոր դարաշրջանի կեանքը վերածաղկի նոր ոգևորութեան ուժգնութեամբ և արևուդդուի դէպի մեր ապագայի հորիզոնները:

Մեր Մայր Հայաստանի վերանկախացումը, սեփական, ինքնավար և գերիշխան Հանրապետութեան ստեղծմամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր առաքելութեան աշխուժացման համար ստեղծուած նոր պայմանները մեզ կը հրաւիրեն մեր գոյութեան արմատներէն եկող այս նոր աւիշը տարածելու մեր ողջ ազգի գոյատարրերուն և գործակատարութեան եղանակներուն մէջ, որպէսզի քրիստոնէական պատմութեան 2000-ամեակը փակուի առ Սատուած գոհութեան և փառաւորութեան զգացումներով և 3000-ամեակը բացուի մեր ազգի համար մեր Սուրբ և Սոաքելական Եկեղեցւոյ պաշտօնական հիմնադրութեան 1700-ամեակի շքեղօրէն հոգելից, ուժգնօրէն ներշնչողական և փառահեղօրէն ստեղծագործական նոր ոգևորութեամբ, հաւատարմութեան նոր վկայութիւններով և նորանոր սպասաւորութիւններով վասն փառացն Սատուծոյ, վասն բարգաւաճութեան ազգին Հայոց և վասն բարուք և ասուք ծառայութեան հանուր մարդկութեան:

Կը սպասենք, կ'աղօթենք և Մեր պատասխանատուութեան սահմաններուն մէջ պիտի կատարենք Մեր գերագոյն կարելին, որ Հարաւային Ամերիկայի մեր երեք թեմերը՝ Արժանթինի, Պրազիլիոյ և Ուրուկուայի մէջ վերանորոգեալ ոյժերով ծաղկուն և բեղմնալից կեանք ունենան և իրենց լիագոյն բաժինը բերեն մեր ժողովուրդի և Եկեղեցւոյ, մեր հայրենիքի և մեր պետութեան վերապարթօնքի այս նոր դարաշրջանի կերտման նուիրական առաքելութեան մէջ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալք շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնք:

**ԳԱՐԵԳՈՍ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ**

22 Օգոստոս 1996

Ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին